

ՏԱՍՆ ԵՒ ԵՌՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրութեան միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունւում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խաւքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Կիրակեայ հանգստութիւնը և մեր գործակա-
տարները.—Ներքին Տեսութիւն. Կիւղացի ար-
դիւնաբերողները քաղաքներում. Արդիւնի գաւառ-
ները լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգ-
լիական աղատամիտ և պահպանողական կու-
սակցութիւնները. Արտաքին լուրեր.—ԽԱՆ ԼՈՒ-
ՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆ. Բժշկի գործընկեր:

ԿԻՐԱԿԵԱՅ ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՐ ԳՈՐ- ԾԱԿԱՏԱՐՆԵՐԸ

Այժմ, երբ կիրակի օրը բոլոր խանութ-
ները փակուած և լինում և մեր գործակա-
տարները ազատ են իրանց սովոր-
ական պարագայներէն, վատ չէր լինի
թէ մեր գործակատները վերապէս մը-
տաճէին շաբաթվայ մէջ իրանց այդ միակ ա-
զատ օրը օգտուէտ կերպով անցկացնելու,
և ոչ թէ միմիայն զուարճանալու և քէֆ
անկուլու...

Մենք չենք ուրանում որ ամբողջ շաբա-
թը աշխատութեան մէջ անցկացրած մար-
դը կատարելի իրաւունք ունի կիրակի օ-
րը ոչ թէ միայն հանգստանալու, այլ և
զուարճանալու, բայց կարծում ենք որ զը-
ւարճութեան հետ միասին կարելի էր խե-
լացի կերպով միացնել և իր մտաւոր ու
նիւթական վիճակի բարեւոյթն հոգը:

Մեր գործակատները չունեն ամբողջ
փիլիսոսում ոչ մի հաստատութիւն, որտեղ
կարողանային կիրակի օրերը հաւաքել
միմեանց հետ հանդիպել, իրանց ամենա-
անհրաժեշտ կարիքներէ վրա խօսել և, այ-
լուսի փիլիսոս «չայդ կուր» սոված փո-
ղովարանը աւելի վաճառականներին հա-
տարակութեան միջին դասակարգի համար
է, նախկին «Արհեստաւորաց», այժմ «Ա-
ռաւորական կուր» կորցրել է իր առաջ-
վայ նշանակութիւնը և այն բնաւորութիւ-
նը, որ ուղեցին յատկացնել նրան այդ հաս-
տատութեան հիմնողները, դառնալով մի-
միայն զուարճութեան տեղ,—այդպիսով
մեր գործակատները չունեն ամբողջ քա-

ղաքում ոչ մի ժողովարան, որտեղ կարո-
ղանային հաւաքվել և մտածել իրանց ա-
մենաանհրաժեշտ կարիքներէ մասին, մի և
նոյն ժամանակ վայելէին համեստ կրթիչ
և օգտուէտ զուարճութիւններ:

Հարկաւոր կը լինէր որ մեր գործակա-
տարները վերջապէս մտածէին իրանց հա-
մար մի առանձին ժողովարան հիմնելու,
որի հետ միացած կը լինէր գործակատա-
րներ խնայողական արկղը, որտեղ նրանք
կը ստանային ամեն տեսակ լրագիրներ,
կուսակցական մի գրադարան, կարող էին
սիրողները ներկայացուցներ սարքել և
հրաւիրել մեր ինտելիգենցիային պատկա-
նողներին կիրակի առաւօտները այլ և այլ
առարկաներից դասախօսութիւններ կարգա-
րու, և այլն: Վերջապէս մեր քաղաքի առե-
տրական գործակատները կուսակցային մի
ժողովարանի, որտեղ հաւաքվել իրանց
կարող կը լինէին հաւաքվել իրանց թէ
մտաւոր և թէ նիւթական վիճակի բար-
ւոյթնան մասին իրար մէջ խորհրդակցելու
համար:

Եւ այս սոսակ ժողովարան ունենալով ոչ
ոչ չէր արդիւն գործակատներին մի և նոյն
ժամանակ և խելացի ու բարոյական զը-
ւարճութիւններ ունենալու: Կիրակի առա-
ւօտը նրանք կարող էին հաւաքվել իրանց
կասկայի գործերը կարգադրելու, իրանց
վիճակի մասին խորհրդակցելու, մի որ և
է օգտուէտ դասախօսութիւն լուսն հա-
մար, և այլն,—իսկ երեկոյեան կարող էին
կամ սիրողները ներկայացում պարքել կամ
պար քաղ իրանց ընտանիքներով կամ վեր-
ջապէս ամուսն ժամանակ խմբովին զը-
սանքները անել քաղաքից դուրս:

Օգտուէտ կը լինէր նմանապէս որ գոր-
ծակատները, որոնք իրանց պարագայնե-
քի պատճառով առհասարակ նստողական
կեանք են վարում, մտցնէին իրանց ընկե-
րութեան մէջ մարմնամարզական այլ և
այլ պարագայութիւններ: Վերջապէս երբ որ
մի անգամ հիմնված կը լինի այդ տես
ընկերութիւն, պարակտիկան ինքն ցոյց
կը տայ թէ ինչ կենտրոն կարելի կը լինի

լրացնել ընկերութեան սկզբնական կանո-
նադրութիւնը:

Թող մեր գործակատները լաւ մտա-
ծեն մեր այդ օգտուէտ և իրանց համար
անհրաժեշտ առաջարկութեան մասին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱՅԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԸ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Շատ անգամ է գրվել թէ ինչպէս առեւտրա-
կանները կեղեքում են գիւղացի արդիւնաբերող-
ներին այս կամ այն քաղաքում: Եւ արդարեւ,
հարկաւոր է լինել քաղաքային կշիռի մօտ տես-
նելու համար թէ ինչ է գործվում այնտեղ: Հաս-
տատակա կարելի է ասել, որ գիւղացին բոլոր-
ովին զգլի է իր արդիւնաբերութիւնը քաղաք
բերելուց, որովհետև դանաղան չարի մրգավա-
ճառներ, մանրավաճառներ այն աստիճան ճնշում
են ողորմելուն, որ նա ակամայից է համաձայնում
վաճառահանել իր ապրանքը: Այդպիսի կեղե-
քութիւնից մասամբ ազատ մնալու համար սպ-
րանքաւոր օտարականները ունեն քաղաքներում
դանաղան դ օ ս տ և ը—բարեկամներ, որոնք և հը-
կում են իրանց հովանաւորակալ ապրանքի ծա-
խելու վրա. առեւտրի հետ կանոնաւոր հաշիւ
են տեսնում և առհասարակ պաշտպանում են
ապրանքատիրոջ շահերը: Ի հարկէ, դրա համար
է նրանք ստանում են որոշ վարձատրութիւն:
Պարզ է որ կարելի է ստիպել գիւղացուն
այդ միջոցին և այդ տեսակ սուտ-պաշտպա-
նին զիմել, և միմիայն այդ հանգամանքը
բաւական է համոզելու չարիքների անխիղճ վար-
մունքի մասին:

Բայց վայ այն գիւղացուն, որը համեմա-
տաբար, փոքր քանակութեամբ պիտոյներ է
բերել ծախելու. այդպիսիների հետ չարիքների
վարմունքը կատարելապէս կամայական է: Մը-
ղավաճառը համաձայնում է գիւղացու պահան-
ջած գինին, կըսում է ապրանքը և տանում իր
կրպակը. այդտեղ ահա նա, առանց քաշելու,

սկսում է գիւղացուն ճնշել, պախարակում է
ապրանքի յատկութիւնը, հաշիւ մէջ կարում է և
եթէ ապրանքատիրը ձայնը բարձրացնէ իր շահե-
րի պաշտպանութեան համար՝ մի փառաւոր էլ
ծնծ կը վայելէ: Ի վերջոյ, բոլորովին զգլած,
վատված գիւղացին սակաւած է լինում ստա-
նալ այն, ինչ որ տալիս են և անիծելով իր բաղ-
ղը՝ կորաղուխ հեռանում է քաղաքից: Իսկ խա-
նութեամբը ինքնաբաւական կերպով չիում է իր
ձեռքերը և մինչև անգամ անձնագոյութեամբ
պատում է գիւղացու գլխին բերած «օյնները»:
Այդպիսի կեղեքումն է պատճառ, որ խանութ-
պանը 5 կոպէկով գիւղացուց առած իրեղէնի
փունտը ծախում է ինքը 7 կոպէկով: Այդպիսի
խաբեղայութիւնները ամեն տեղ արդէն սովորա-
կան երևոյթ են դարձել և խաբեղանքի լեզուով
այդպիսի գործողութիւնը անուանում է «ջուր
տալ»:
Յաճախ պատահում են դէպքեր, որ խա-
նութեամբը դիտմամբ վէճ սկսելով գիւղացու
հետ՝ հրաժարվում է նրան փող վճարել, հաւա-
տացնելով որ արդէն վճարել է, բայց «չարաւտան»
գիւղացին կամում է կրկին ստանալ: Կան
բարեհոգիներ, որոնք սղտնքաղելով այն բանից
որ նոր ձեռի թղթադրամներ երևան գոյ-
նը միատեսակ է, խաբեղանքը երեքանոցը
տուել են հինգանոցի տեղ, մէկանոցը երեքանոցի
տեղ և այլն: Գլխաւորն այն է, որ բոլորը հա-
մոզված են թէ գիւղացուն կարելի է անպատիժ
խաբել. գիտեն, որ մի քանի բուբուլ համար
գիւղացին չի համաձայնի դանդաղ սկսել և օրե-
րով իր գործը թողած՝ քաջ գալ դատարաններում,
և այդ պատճառով նրա հետ կամայաբար են
վարվում:

Պարզ է, որ այդպիսի պայմանների մէջ գիւ-
ղացին անկարող է օգտվել իր արդիւնաբերու-
թիւնից և քանի որ շատերն էլ պարտք են համա-
րում օգտվել գիւղացու տգիտութիւնից, քանի որ
մի դատարարի մէջ վերին աստիճանի զարգա-
ման են հասել շահասիրական ձգտումները, այդ-
պիսի երևոյթները անպակաս կը լինեն...

Ն.

ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՏՆԵՐԸ

IX

Բժշկական վարչութեան հաղորդութիւնը.—Խօսե-
րայի հայրենիքը.—Լոյսի գիւղը.—Խօսերայի միկ-
րօբը.—Խօսերայի յատկութիւնները, դարգացման
պայմանները և տարածման եղանակները.—Հի-
ւանդի արտաթորութիւնները իրեն միջոց խօսերա-
յի տարածման.—Գծանի ջրի մակերեսով բարձ-
նալը ու ցածնալը.—Պետենհօֆերի և միւս գիտ-
նականների կարծիքները:

Այս անգամ չեղելով մեր յօդուածների ըն-
թացքից, խօսելու ենք այն անկող հիւրի—խօսե-
րայի մասին, որ վերջին ժամանակներս լրագրու-
թեան նիւթ դարձաւ և որի մասին կովկասեան
քաղաքային տեսութեան բժշկական վարչու-
թիւնը, պաշտպանական «Кавказъ» լրագրի 263
համարը շտապեց հանդատացնել հասարակու-
թեանը, թէ ամենայն ինչ կարգադրված է թըշ-
նամուն նոյն իսկ տահմանադրութեամբ արմատաւոր
անելու համար:

Քննաւոր յաղթելու համար անհրաժեշտ է
ճանաչել նրան. իւրաքանչիւր մեզանից պիտի
իմանայ նրա յատկութիւնները, նրա տարածման
եղանակները, հիւանդութեան պատկերը, հիւան-
դի պահպանողութեան ձևերը, մինչև բժշկի դա-
ն հիւանդին առաջին օրնութիւն տալու բոլոր
միջոցները, այն ժամանակ, ընթերցող, մենք բո-
ւորս էլ հանդիստ և աներկիւղ կարող ենք ճա-
կատէ ճակատ հանդիպել թշնամուն, որը տեսնե-

լով մեզ գիտութեան զենքերով զինաւորված՝ կը
թողնի և կը փախչի իր հայրենի երկիրը, ուր իր
գոյութեան համար միշտ պարարտ հող է գտնուի:
Ահա այսպիսի գիտաւորութեամբ դառնում ենք
խօսերայի նկարագրութեանը, որ, մեր կարծի-
քով, միակ միջոցն է հասարակութիւնը հանգս-
տացնելու երկրից սպառնող լրագրական լուրե-
րից: Կախառնում որքան կարող եմ հանգամանո-
րէն պատմել գիտութեան վերջին խօսքին համա-
ձայն, խօսերայի տարածման եղանակների մա-
սին, նրա յատկութեան, հիւանդի պահպանողու-
թեան մասին և վերջը կը յիշեմ այն հասա-
րակական առողջապահական միջոցների մա-
սին, որոնք հաստատ և արդիւնաւոր կարող են
լինել:

Խօսերայի հայրենիքը՝ շնչկատանալ—Գաւ-
գեսի և Բրա համապատասխան ասիայի երե-
քիստոսի ծննդից մի քանի դար առաջ գրված,
սանսկրիտ հեղինակութիւնների մէջ այդ հի-
ւանդութիւնը յայտնի էր մահա մարի (magna-
mors-ժանտամահ) անունով, հիւանդութեան յատ-
կութիւններին նայելով հին-հնդկաստանից այլ և
այլ անուններ էին տալիս խօսերային իր հայրե-
նիքից խօսերայի շատ անգամ տարածվող այսխար-
հիս ամենայն կողմը, քաղաքներ ու գիւղեր
աւերելով, բնակիչներին դարձնելով և երկրից
օգտաւորով: Մինչև վերջին ժամանակները բը-
միշկները կարծում էին թէ խօսերայի Եւրոպայում
առաջին անգամ է երևացել 1830 թ.ին Գոլ-
տոր Moore-ն անցնել ամսի սեպտեմբերի 14-ից
«The British. Med. Journ.» բժշկական թերթի
մէջ «խօսերայի և ամառայ լուծողութեան հա-
մեմատութիւն» վերնագրով յօդուածում պնդում
է, որ խօսերայի ամենաշին հիւանդութիւններից

մինն է և թէ Եւրոպայի շատ վաղուց ծանօթ է
եղել այդ հիւանդութեան հետ:

Ինչպէս և միւս վարակիչ հիւանդութիւնները,
խօսերայի կարող է միայն առաջանալ, երբ մար-
դու մարմինը մէջ որ և իցէ կերպ մտնում է, խօ-
սերային յատկութիւն, բուսական կազմութիւն ունեցող
ստորակէտ առն մահ մի կ օ բ Ե, որը գիտու-
թեան մէջ առաջին անգամ գտաւ 1884 թ.ին,
Բերլինի պրօֆէսոր, յայտնի գիտնական Լօ ի լ Ե:
Խօսերայի ստորակէտանման միկրօբը, մարսո-
ղական դործարանները մտնելով, աղիքների մէջ
նպաստաւոր պայմաններ է գտնում անթիւ կեր-
պով բազմանալու համար, մտնում է աղիքների
պատերի մէջ, թոյլ կամ սաստիկ նշաններ առա-
ջացնելով, ի միջի այլոց փսխողութիւն և
լուծողութիւն, որը և դուրս արտաթորվելով
նպաստաւոր հանգամանքներին նայելով՝ մտնում
է միւս անհատի մէջ և իր արշաւանքը շարունա-
կում: Խօսերային միկրօբները կարող են և մարմ-
նից դուրս բազմանալ. խոնաւ, ապակաւութիւն-
ներով հարուստ գեղինը՝ նրա սիրած ապաստա-
րանն է: Նոյն իսկ բժիշկները գիտնական նպա-
տակի համար այլ և այլ աննշարար քաղաքա-
թիւնների մէջ, խօսերային միկրօբներին արհես-
տական կերպով են բազմացնում իր հայրենի-
քում յաւիտեան գոյութիւն օժնեւոր. համար
խօսերայի միշտ նպաստաւոր պայմաններ է զը-
նում, իսկ հայրենիքից դուրս, ինչպէս որ գիտու-
թիւնը հաստատում է, չը կարողացաւ նա կլի-
մայատար (акклиматизироваться) լինել: Խօ-
սերայի աշխարհիս ամենայն կողմն էլ ճանապար-
հորդ է, բայց կարճ կամ երկար ժամանակից
յետոյ անհետացել: շնչկատանից դուրս խօսե-
րային միկրօբները հանգամանքներին նայելով

կարող են արագ բազմանալ, մի շարք սերունդ-
ներ տալ, բայց վերջը բոլորովին անհետանալ
այնպէս, ինչպէս որ անհետանում է իր հայրե-
նիքից օտար աշխարհ տեղափոխված մի բոյս, իր
համար պարարտ հող և յարմար կլիմայ չը զը-
նելու պատճառով: Ինչ և իցէ շնչկատանից
դուրս, խօսերային միկրօբները վերջ ի վերջոյ
անհետանում են, մի և նոյն է թէ որտեղն են
ընտրած եղել նրանք ապրելու և աճելու համար,
թէ մարդու կազմուածքը, և թէ կազմուածքից
դուրս:

Թէ ստորակէտանման միկրօբներն են պատճա-
խօսերային հիւանդութեան, այդ նրանից է երե-
ւում, որ այդպիսի միկրօբներ միայն խօսերայով
հիւանդների արտաթորութիւնների մէջն են գտնու-
վում և երկրորդ՝ հիւանդութեան թէ սաստիկու-
թեան և թէ թուլութեան համեմատ, միկրօբների
քանակութիւնը կղկղանքի մէջ աւելի են սի-
րում բարակ աղիքների ներքին մասը, որը աւելի
ծանր փոխութիւնների է ենթարկվում: Գիտ-
նականները ընդունում են, որ ստորակէտանման
միկրօբները իրանցից մի առանձին թոյն—պո-
մայինն են և են առաջացնում, որով և թուլաւո-
րում են ամբողջ կազմուածքը: Խօսերայի թէպէտ և
վարակիչ հիւանդութիւն է, բայց կազմական չէ,
խօսերայով հիւանդի հետ յարաբերութիւն ունե-
ցողները ուղղակի չեն վարակվում, բժիշկները,
հիւանդի հոգատարները այնքան էլ բաղը ունեն
հիւանդանալու, որքան և ուրիշները—հիւանդի
հետ յարաբերութիւն չունեցողները: Գլխաւոր
վարակման աղբիւրը հիւանդի կղկղանքը և դուրս
փոխված նիւթներն են, որոնց մէջ ստորակէտա-
նման միկրօբները վճվում են իրանց համար սը-

ԱՐԻՏՈՒՆ ԳԱՆԱՌԸ

Քանիցս առիթ ունեցած եմ խօսել «Մշակի» այս էջերի մէջ Արդուին գաւառի կաթօրիկ հայոց մեռելային անտաքերու թիւան մասին ղէպի ազգային, կրթական գործը և ամեն անգամ միայն մեղադրական վերջաբան եմ տուած իմ յօդուածներին Այժմ, մի կարճատև ճանապարհորդութիւն անելով այդ գաւառում, նկատեցի քանի մի նպատակաւոր պարագաներ, որոնք ազգային նկատմամբ բաւական միջոցաւորական են, ուստի աւելորդ չեմ համարում քանի մի խօսք ասել դրանց մասին:

Արդանուշ գիւղաքաղաքում, ուր միայն հայկաթօրիկներ են բնակվում, մօտաւորապէս 200 տուն, կրթական գործը ժողովրդի մօքի մէջ սկըսել է առաջնակարգ տեղ բռնել: Նախկին տիրացուական կարգերն իսպառ արտաքսելով, ուսումնարանին հոգաբարձուները հրաւիրել են նոր սեւուցիչ, որը նոր մեթոդով պիտի դաստիարակէ: Ուսումնարանին չէնք մինչև այժմ վերին աստիճանի անյարմար էր. վերին յարկում բնակվում էին ժողովրդագետ վարդապետը և իր օգնականը, իսկ ստորին յարկում, որ ախտօրիկ ունէր, տարբերութիւն չունէր, զետեղված էր ծխական ուսումնարանը, որը ըստ ինքեան, ամենայնարմար բնակարանն էլ էր դաստիարակողի համար: Բայց երբ վերջապէս դպրոցը ազատվեց իր տիրացուից, որը նրան իր մենավաճառութիւնն էր շինել և ամեն կերպ խեղդիկներ էր խաղում աշակերտներին ծնողներին զխնայ, հոգաբարձուները առժամանակեայ կերպով մի յարմար բնակարան վերակոխ, հիւր գրին մի նոր ընդարձակ շէնքի, որ պիտի ծառայէ թէ իբրև ուսումնարան, և թէ պիտի ունենայ ուսուցիչներին համար սենեակներ և ազատ տեղ աշակերտներին խաղալու համար: Այս առիթով գոհունակութիւնն այնքան մեծ էր, որ ժողովրդագետ վարդապետի մի քանի փոքր վրա, ամբողջ երիտասարդութիւնը յանձն առաւ շէնքի համար հարկ եղած փայտեղէն, քար և այլ նիւթերն անձամբ կրելու. այս կերպով բանւորներն տրուելիք վարձը մնաց ուսումնարանին: Նշանակվեցան վերակացուներ շինութեան վրա, որոնք եռանդով սկսեցին գործը և յոյս կայ, որ նախանձելի փոյթով և ճշգրտահանութեամբ կը կատարեն իրանց պաշտօնը: Շինութեան համար հարկ եղած քանի մի հազար բուրջու գումարը մասամբ պիտի հոգայ եկեղեցին և մասամբ հասարակութիւնը, որը կատարեալ պատրաստակաւնութիւն է յայտնած դրան: Եկեղեցին անձուկ կերպով կապված է դպրոցական խնդրի հետ, շնորհով այն պարագային, որ եկեղեցական գումարներն մատակարարութիւնը գտնվում է աշխարհականների ձեռքին և հոգեւորականներին վերա-

նընդարար նիւթ ձարելով: Թարմ կղզիները արդէն վարակելի յատկութիւն ունի, և այդ յատկութիւնը, հանգամանքներին նայելով, կարող է աւելի սաստկանալ, բաւական է որ միկրօբները մի կերպ մտնողարար նիւթ ձանկեն բնակարանն այլ և այլ անկիւններում, շորեղէններն վրա և ահա սկսում են արագութեամբ բազմանալ: Ուրեմն պիտի ընդունել, որ հիւանդի կղզիները և փերսված նիւթերն ունեն վարակելի յատկութիւն, որոնցից զգուշանալով կարելի է բուրբուրի ազատ լինել վարակումից: Գոհար Բօսնաֆօնը պատմում է, որ 1835 թիւն Ալփրում, խօլերայի սաստիկ համաճարակումից մեծապէս խօլերայի հիւանդի խնամատար կնոջը առաջարկել էր այլ և այլ միջոցներ հիւանդին տաքացնելու համար. երիտասարդ կինը ջուր տաքացնելու համար ժամանակ չը կորցնելով, վճռում է մարդուն տաքացնել իր սեփական մարմնի տաքութեամբ. բժշկի այցելութիւններից յետոյ նա համոզւում է իր շորերը և մերկ փաթկալով է իր սիրելի ամուսնուհի հետ և այսպէս ամբողջ դիւրեմ մընում է հիւանդին հետ, և ճշմարիտ հերոսուհին կարողանում է հիւանդին տաքացնել, հիւանդը առողջանում է, իսկ կինը չէ վարակվում և բուրբուրի առողջ է մնում: Այսպիսի դէպքեր հաստատում են, որ կարելի է միշտ խնամք ունենալ խօլերայով հիւանդի վրա և նախազգուշութիւններ բանեցնելով կարելի է վարակումից ազատվել:

Այժման հաղորդակցութիւնների արագութեան և զիւրթեան պատճառով, ճանապարհորդները անգիտակցաբար տարածում են խօլերային միկրօբները թէ իրանց շորերի և թէ իրանց վազմուածքի միջոցով անաղին տարածութեամբ:

պահված է միայն հակոգութիւն նրանց վրա: Այս ընթացքով, այսինքն երբ հոգեւորականները չեն միջամտում եկեղեցու և դպրոցների տնտեսական և այլ արտաքույ եկեղեցական գործերին, այս վերջինները կանոնադրապէս առաջանում են: Եկեղեցու երեցիկն ու Ստ. Լէվէնդեան, կարգին հաշիւ ներկայացնելով, արժանացաւ ընդհանուր շնորհակալութեան և վստահութեան, և չը նայելով իր բազմազարդ վիճակին, հանրային թախանձանաց վրա յանձն առաւ շարունակել իր պաշտօնը: Գոյնաւոր արժանի են յատկապէս Ռատակեան եղբայրները, որոնք ղեկավարում են տեղական բուրբուրի ազգային գործերը և անձնութեամբ աշխատում են յօդուտ եկեղեցու և երկսեռ ուսումնարանների միացնել խնդրին: Իրանք լինելով միասնական խնամակալ սրանից 4 տարի առաջ հանգուցեալ գեր. Զաքարեան եպիսկոպոսի ձեռքով հիմնված Ա. Յ. «Եղբայրութեան», որի միջոցներով պահվում է տեղական օրիորդաց ուսումնարանը, իրանց սեպհական պատասխանատւութեան ներքե շահեցնում են «Եղբայրութեան» գումարները, որով անհամեմատ աւելի արդիւնք և օգուտ են ցոյց տալիս, քան թէ այդ գործը լինէր մի օրիշի, մասնաւոր եկեղեցականների ձեռքում: Եւ Ռատակեանց գերդաստանը Արդանուշի մէջ ամենից հարուստը և ամենից կարողն է. նրա այս աշխատութիւնները պատիւ են բերում իրան:

Իրաւամբ ուրեմն կարող ենք յուսալ, որ Արդանուշի հայկաթօրիկ հասարակութիւնը, որի անդամները, ի դէպ ասած լինենք, թէ և միմիայն մէջ շատ հաշտ չեն ապրում, բայց եկեղեցու, ուսումնարանի, կամ առհասարակ ընդհանրութեան վերաբերեալ խնդրներում միշտ միանում և միասին են գործում, կը յարատեն իրանց ջանքերի մէջ և նորակառոյց ուսումնարանը օրից օր կը յառաջացնեն: Եւ այս առաւել ևս այն պատճառով, որ այժմ իրանց մէջ ունեն մի ճշմարիտ կրթված և երիտասարդ հոգեւոր հայր, Կիրիւղ վարդապետ Եղեղեան, որը արդէն ջնքմ համակրութիւն է վայելում, և որի ներկայութիւնից կաշխատեն անշուշտ օգուտ քաղել:

Յաւում եմ, որ մի և նոյն միջոցաւորական երկոյթը չը կարողացայ տեսնել Արդուին գաւառի կենտրոնում, Արդուին քաղաքում, ուր կաթօրիկ-հայերը հնգապատիկ աւելի բազմաթիւ և աւելի շատ են չլիւսւմ իրանցից աւելի զարգացած միջոցաւոր կողմասեան քաղաքներին հետ: Արդուինը առաջադրում է կրթային քայլերով. այնտեղ իշխում է միայն անձնական, կուսակցական կիրքը, որ հետզհետէ ծաւալում է և ամեն առիթով ցոյց է տալիս իր տգիղ դէմքը: Քաղաքի ղեկուսատիւ ընտրութեան մասին մղված մոլի և ան-

հեռու տեղեր և համաճարակումներն պատճառ դառնում. բժշկական դրականութիւնը հարուստ է ապացոյցներով թէ ինչպէս մարդիկ տարածել են մի տեղից միւս տեղ խօլերային միկրօբները և խօլերային ճալթոցներ են առաջացրել: Պետենհօֆը պատմում է թէ 1865 թիւ խօլերայի ժամանակ Օդեսայում, մի ըստ երկոյթին առողջ կին, թիւթն լուծողութիւն ունեցող իր փոքրիկ երեխայի հետ ուղևորվել էր Օդեսայից, համաճարակումներից ազատ ճանապարհով դէպի Այուտենբուրգ. կինը երրորդ օրը հիւանդանում է խօլերայով, և հիւանդները օրը մեռնում. մի քանի օր անցած երեխան էլ է վախճանվում. ահա այս առաջին դէպքը խօլերան համաճարակ սկսվում է տարածվել Այուտենբուրգում և անցնել նրա շրջակայքը: Խօլերան կարող է տարածվել հիւանդների կղզիներով կեղտոտված սպիտակեղէններով ևս. 1849 թիւն Անգլիայի Լիդս քաղաքից վրաստով ուղարկել էին իտալի մօտ գտնված Մուր-Մորկոսի գիւղաքաղաքը խօլերայից մեռած մի կնոջ ապակեմկան և չը լուծացած օպիտակները: ղէնկերը, այդ ժամանակ թէ Մուր-Մորկոսում և թէ նրա շրջակայքում մօտ 30 մղոն հեռավորութեամբ խօլերա չը կար. փոստից շորեր ստացող գիւղացիներ, արկղը բազաններուց վրա երկրորդ օրը խօլերայով է հիւանդանում, չորրորդ օրը մեռնում է գիւղացու կինը և երկու նրա հիւրը խօլերայով ծանր հիւանդանում են, բայց շուտով առողջանում, հիւանդանում են նմանապէս էլի երեք հոգի, բայց շատ թիւթն:

Եթէ արտաքնոցները ղետնի մէջ են շինված, հեղուկանիւթ նեխվող նիւթերը նրանց միջից կարող են դետնի տակը ծորալով անցնել և թափվել գետնի տակի ջրի մէջ և կամ խմելու ջրերի մէջ:

նպատակ սլայքարը ամենալաւ ապացոյց է իմ ասածին:

Գրանից զատ մի կարևոր զանազանութիւն կայ արդուինցիներին և արդանուշցիներին մէջ, որ տիրող դեր է կատարում նրանց գործունէութեան մէջ. արդանուշցիք վրոք ինչ իդէալիստ են, ուր որ արդուինցիք միմիայն նիւթական շահեկեղեցական և թէ զարդական գործերը թողած են հոգեւորականներին ձեռքը, որոնք ըստ կամաց և ըստ իրենց հայեցողութեան և դադարների կառավարում են թէ մին և թէ միւսը. քանի մի բացառութիւն որ կայ նրանց մէջ, այն էլ ի նըպատ լուսաւորչական հայերի է և ոչ կաթօրիկների:

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, հոկտեմբերի 17-ին, թագաւոր Կայսրի և Կայսերական Ընտանիքի, 1888 թիւ հոկտեմբերի 17-ի երկաթուղային խորտակումից փրկվելու տարեդարձի օրը թիֆլիսի բոլոր դաւանութիւնների եկեղեցիներում գոհացողական մաղթանքներ կատարվեցան: Քաղաքը զարդարված էր դրօշակներով, իսկ երկիւղեան լուսաւորված էր թատրոններում, ներկայացումից առաջ, կատարվեց ուսուց ազգային օրհներգը: Օպերային թատրոնում նոյն երեկոյ ներկայացվեց Գրինայի «Жизнь за Царя» օպերան, որի վերջաբանութեան ժամանակ յայտնի «Славы» եղբին մասնակցում կին թէ օպերային մաղթել խումբը և թէ մալօրսնների խումբը:

Այդ խնդրում են յայտնել հետեւեալը. «Այն անձանց, որոնք առանձին նամակներով դիմել են Արեւմտեայի հայ գաղթականներին Մծարա գիւղի հայոց ուսումնարանի վարչութեանը, յիշեալ ուսումնարանում ուսուցչական պաշտօն ստանալու համար, պարտաւորութիւն ենք համարում յայտնել, որ այլ ևս հարկ չը կայ այդ նպատակով դիմելու, քանի որ ուսուցչիւր արդէն վարձված է և ուսումնարանի մէջ դաստաւութիւնը արդէն սկսված է: Գիւղացիք մեծ համակրութեամբ են վերաբերվում դէպի ուսումնարանը»:

Արեւմտեայի Մծարա գիւղից մեղ գրում են. «Այս տարի մեր գիւղում ամեն բանի առատութիւն է. առատ են մանաւանդ սիւնիցը և ծըխախտոր: Այս վերջին բերքը ամբողջ Սուխու-մեան շրջանը բաւական մեծ քանակութեամբ է արդուինցիներում, այն է մօտ 30 հազար պոռոտարեկան»:

անդամ, այսպիսի հանգամանքը պատճառ կարող է դառնալ ամբողջ թաղերի բնակիչներին մէջ համաճարակումներին առաջանալուն: Նմանապէս երկուդն աւելի է մեծանում, եթէ խօլերայով հիւանդներն կեղտոտած շորերը լուսաւորում են կամ ուղղակի հիւանդի կղզիները կատարվում թափվում խմելու համար գործածվող դետակների մէջ: Գոհար Կիրիւղ վարդապետը խօլերային ստորակէտանման միկրօբները փոխա Զնդկատանի լճակներից միմիայն. բնակիչները այդ լճակից էին ջուր գործածում. վերջը պարզվեցաւ, որ լճակի ջրի մէջ խօլերայով հիւանդի կեղտոտած շորերն էին լուսացել. նմանապէս խօլերային միկրօբները կարող են մրգեղանիքը ջրով լուսացված բանջարեղէնները կամ մրգեղանիքները կարող են վարակման միջոցով լինել: Կօլեր և Գրօսսը ճանձներ լիւերի և փորի վրա խօլերային միկրօբներ գտան, ճանձները, ինչպէս յայտնի է, ուրախութեամբ վրա են թափվում այլ և այլ կեղտոտութիւնների, ուրեմն և խօլերայով հիւանդի կղզիները կարող են վրա ևս, ուրեմն և վարակումը կարող են տարածել:

Խօլերային միկրօբները փոխանման գրութեամբ լողալով օդի մէջ կարող են նմանապէս վարակումի պատճառ լինել. չորացած միկրօբները կորցնում են իրանց վարակելի յատկութիւնը, բայց մի և նոյն ժամանակ, ինչպէս որ Հիւսպլէի հետազոտութիւնները հաստատում են, խօլերային միկրօբները, հանգամանքներին նայելով, մանր մասնիկներն—ինչպէս որ անուանում են արտօսպօրիս երկ մի բաժանվում, որոնք մի և նոյն նշանակութիւնն ունեն, ինչպէս և բոյսերի սերմերը. այդ արտօսպօրները իրանց աճելու յատկութիւնը չեն կորցնում մանաւանդ խոնաւութեան մէջ, այնպէս որ օդը վարակման

ՂՈՒՐԱՅԻՑ մեղ գրում են. «Ամսիս 11-ին Գերբէտից Գուրա եկող փոստը քաղաքից 35 վերստաչափ հեռու Զիբերդարա կոչված տեղում» կողմով է աւազակապետ Մեհադի-Մեհլիի խումբի ձեռքում: Ինչպէս տեղեկացանք, փոստում եղեք է 3,872 բուրջի 32 կօպէկ դրամ և 150 բուրջու չափ կապոցներ: Նմանապէս տարել են երեք պահակների ձիաները, հրացանները և փոստի երեք ձիա ու պոչալարիսի բեմովէրն ու վերաբուհուն: Աւազակները այնպիսի հմուտութեամբ չըջապատել են փոստը իր պահակներով, որ վերջինները ոչինչ ընդդիմութիւն չեն կարողացել անել: Փոստից մի կէս վերստ հեռու հետեւում եղել Դամախու թեմի առաջնորդ, Մեսրոպը եպիսկոպոս Սիբասեանց, որը տեսնելով թէ կողոպտում են փոստը, յետ է դարձրել կառքը և ազատվել է»:

ԱՐՄԱՒԻՐԻՑ մեղ գրում են. «Հոկտեմբերի 12-ին, ցերեկվայ ժամը 11-ին, այնպիսի մի սատիկ փոթորիկ եղաւ Արմաւիրում, որի նման ծերերն անգամ չեն յիշում: Տներն շատ տանքները քամի տարաւ. և քաղաքից շատ ապրանք քնեց, տարաւ: Առ այժմ յայտնի չէ փոթորիկից պատճառած վնասը»:

Մեր լրագրին հաղորդում են Արմաւիրից, որ այս տարի Արմաւիրում և նրա շրջակայ գիւղերում անասունների ցաւ կայ և յատկապէս տաւարի մեծ կոտորած: Կարճ ժամանակում մօտ 500 զուլս հզներ և կովեր սպանվեցան օստիկանութեան հրամանով: Հիւանդութեան շարունակվելու պատճառով, ինչպէս մեղ գրում են, կատաւարութեան հրամանով երկու բժիշկներ են ուղարկված այդտեղ: Գիւղացու գրութիւնը շատ անանխանակ է. այն մարդը, որը մի քանի օր առաջ տանեակ հզներ և կովեր ունէր, այժմ վերջին աղքատն է. դարձել, տաւարի տարախոխիկ ցաւի պատճառով: Թղթակիցն աւելացնում է որ առևտուրն էլ շատ ընկած գրութեան մէջ է Արմաւիրում:

Մեղ գրում են ՆԵՐՔԻՆ-ԱՍՏԱՅԻՑ հետեւեալը. «Շուտով զինուորականացեալ ատենը կը սկսէ իր գործունէութիւնը և կը հրաւիրէ Գարաշիչազի շրջանի նորակալ զինուորներին ղէպի վիճակահանութիւն: Առաջին վիճակահանութիւնը կատարվելու է Կաղկաճօրում (Գարաշիչազում) իր շրջակայ 30 գիւղերի հետ միասին ամսիս 15-ին: Այդ յիշեալ ատենը աւարտելով իր գործը Գարաշիչազ գաւառաբանում, անմիջապէս դառնալու է Նոր-Բայազետ և սկսելու է եմթարկել վիճակահանութեան նաև Նոր-Բայազետի մասի զինուորացու երիտասարդներին»:

պատճառ է լինում ոչ թէ նրա մէջ չորացած միկրօբների շնորհով, այլ այդ միկրօբներից առաջացած՝ յարմար հանգամանքներին նայելով՝ անտրօսպօրները:

Երկրորդ ժամանակ մտածում էին, թէ խօլերայով հիւանդի կղզիները առողջներն ուղղակի չէ կարող վարակել, այլ հիւանդածին նիւթը նախ և առաջ պիտի դետնի մէջ մոնէ, մի առանձին փոթիկութիւններն ենթարկվի և ապա վարակի յատկութիւն ստանալ: Այդ միջոցը պաշտպանում էր յայտնի առողջաբան Պետենհօֆը. նրա կարծիքով, դետնի և այլ տեղային սլայքները հասցին նշանակութիւն և սաստիկ ներգործութիւն ունեն խօլերայի հետեւանքների վրա, եթէ խօլերան մի օր և է կերպ երևացել է մի տեղ: Գիտնականներն մեծամասնութեան կարծիքով, դետնի նշանակութիւնը կարող է սաստիկ լինել կամ թոյլ, նայելով թէ որքան է ապականված գետնը, որքան է լցված նա նեխվող գործարանաւոր նիւթերով, որոնք միայն կարող են լինել կերակուր միկրօբների աճման և զարգացման համար: Այս պատճառով խօլերայի արշաւանքը աւելի սաստիկ է քաղաքների այն թաղերում և փողոցներում ու տներում, ուր բնակիչներն անհոգութիւնից կամ տղիտութիւնից հարուստ է գետնը ամեն տեսակ նեխվող գործարանաւոր նիւթերով: Շատ անգամ պատահում է, որ հիւանդանում են մի տան այն բնակիչները, որոնք մի և նոյն արտաքնոցն են դուրս գնում և կամ օդովում են ընդհանուր հօր ունեցող մի քանի արտաքնոցներից, երբեմն հիւանդութիւնը տարածվում է մի կեղտոտար խողովակի ուղղութեամբ: Մի խօսքով կարելի է ասել, որ խօլերան գորդանում և աւելի օյթ է ստանում կեղ-

Մեզ հաղորդում են, որ այս օրերս բազմաթիւ հողուց բաղկացած մշակների մի խումբ, կամ ինչպէս սովորաբար ասում են՝ քարավան՝ թիֆ-լիսից ճանապարհ ընկած իր հայրենիքը՝ այն է թիւրքաց Հայաստանի Տարսն գաւառը:

Վերջին օրերի ցրտերի պատճառով կովկասեան ցուցահանդէսի այցելուները թիւրքաց հողուցի մէջ են լինում, որ չեղածի կարելի է հաւատարեցնել: Կովկասեան առաջին ցուցահանդէսի համար այդպիսի պատահական անաղուծելի էլ զգալի է, որովհետեւ զաւարդ է մեծ աղբեղութիւն ունենալ եկամուտի վրա, որի հետեւեւ յայն կը լինի, որ ցուցահանդէսի մուտքը չի ծածկի Գիւղատնտեսական ընկերութեան արած պարտքերը և ծախսը:

Անգղաբար գանգառներ ենք լուծում, որ Անգլի-կովկասեան երկաթուղու շնորհով թիֆլիսի հետ շատ մօտ յարաբերութիւններ սկսած Գանձակ քաղաքը շարունակում է մնալ իր նախկին թմրած, քնած դրութեան մէջ, իր պարսկական միջոցառումը Գաղաթը, թէև համարվում է նահանգական մեծ քաղաք, և ունի զինմարտի, երկաթուղային, և հասարակական շատ հիմնարկութիւններ, բայց de facto անփութիւն դրութեան մէջ է գտնուում թէ արտաքին և թէ ներքին կողմից: Արտաքին կողմից Գանձակը ուղղակի տեսք ունի, նա ողորմելի է և ներքին կողմից, քաղաքի մէջ կեանք չը կայ, քաղաքացիներին զբաղեցնող մի ընդհանուր, լուրջ խնդիր չը կայ, չը կայ գործող ինտելիգենցիա, չը կայ գործ տեսնելու շնորհ ունեցող երիտասարդութիւն: Եկուր չինովնիկութիւնը իր պաշտօնական գործերն է կատարում, քաղաքացիները գանգառ-վում են տեղական բերքերի պակասութեան վրա, և այդ բոլորի հետ միասին տիրում է կատարելապէս անշարժութիւն բոլորի ներքին կեանքում: Ընտանիքում, որը համեմատ լինելով պարսկական սովորութիւններով, ոչ մի փոփոխութեան չէ ենթարկվում, այնպէս, որ եկուր իր աչքերին զբաղաւորութեամբ է հաւատում, թէ միջին սա Գանձակն է, ուր փողոցում կ'ընդ տեսնուի տեսնելիս, թիկունքն է դարձնում դէպի նրան... Այդ բոլորից յետոյ Գանձակի այդ քնաթափալ դրութիւնը տեսնելով՝ մնում է օրօր երգել՝ ասելով՝ «Ննջիր, որդեակ, անուշ քնու...»

Եւրոպայում հրատարակվող երեք հայ լրագրե-րը վերջին ժամանակներս սկսել են, ինչպէս ասում են՝ միմեանց միմեաւ ռուտել... Կարճ մղել սե-րական համագործակցութիւն համար, հրապարակ գլաւ իր ուղղութիւնը պաշտպանելու համար, —

ստա, խոնար, բնակչներով լի, վատ հողմահա-րուած տներով կամ թաղերի մէջ: Բացի մեր յի-շած պայմաններից, որ շատ հեշտ կարելի է հե-ռացնել նպատակայարմար, առողջապահական միջոցներով, ճշմարիտ է լինում են գետնին կամ կլիմային վերաբերելու և այնպիսի պայմաններ, որոնց հետեւեւ շատ դժուար է և որոնք նպաս-տում են խօլերային համաճարակումների դար-գացմանը: Եւրոպայի կան այնպիսի տեղեր, ուր խօլերայն ոչ մի ժամանակ համաճարակ յատկու-թիւն չէ ստանում: Այդ կողմից Քրասնովսկան Լիւն քաղաքը աղող օրինակները մինն է, քանի անգամ է պատահել, որ Լիւն քաղաքը չըջկա-նեւրը համաճարակ վարակված են եղել խօլերա-յով, բայց մի և նոյն ժամանակ Լիւնի մէջ խօ-լերային դէպքերը թույլ են եղել և քիչ և ոչ մի ժամանակ համաճարակ կերպարանք չեն ստացել: Պետերբուրգում խօլերային համաճարակումների միջոցն ոչ մի ժամանակ չէ նկատվել, որ հի-ւանդութիւնը կարողանայ համաճարակ տարած-վել նրա շրջակայքում գտնված Զարկոէ-Սելո անուանված տեղում, չը նայելով որ այդ երկու քաղաքները մէջ եղած յարաբերութիւնները հա-մաճարակման ժամանակ ևս շարունակվել են:

Բժշկական գրականութեան մէջ կան օրինակ-ներ, որոնք հաստատում են, որ խօլերային կարող է կենտրոնանալ քաղաքի մի նշանաւոր տեղում, իսկ քաղաքի միւս մասերը կարող են կամ բոլո-րովի աղատ լինել խօլերային և կամ շատ թի-թի են հարուածվում: Լեբեդ ասում է, որ 1847 թ.ին Պարիզի Սալպետրիէի անուանված շէնքում (հիւանդ պառու կանանց համար) այնպէս սաս-տիկ տեղական խօլերային համաճարակումն էր, որ այդ շինութեան մէջ բնակվող 5.000 բնա-

շատ համակրելի յատկութիւն է, բայց միթէ դե-համար հարկաւոր է միմեանց միմեաւ շարու-տան և այլ այդպիսի բառերով: Ինչ հարկաւոր է հայտնել: Լաւ բան չէ այդ...

Մի քանի ժամանակ առաջ տեղական լրագրե-րները հաղորդեցին, որ տեղացի հայ դերասաննե-րից մէկը գնացել է Կ, Պոլիս այնտեղից դերա-սաններ և դերասանուհիներ հրաւիրելու: Թիֆլիսի հասարակութիւնը հիմնականում այդ լուրերի վրա՝ գուցէ միջնորդում է այն յոյսով, որ շուտով Կ, Պոլիսից մեզ մօտ կը գան տաղանդաւոր արտիստ-ներ և շնորհալի դերասանուհիներ...: Սակայն այդ տեսակ յոյս ունեցողները կատարեալ հիւ-սկալման պէտք է հանդիպեն, — որովհետեւ թիֆ-լիսից ոչ ոք չէ գնացել Կ, Պոլիս, և այդ մա-սին տարածված լուրերը կատարելապէս սոս-տ և շինծու են եղել...

Յայտնի նկարիչ Յովհաննէս Ալվազովսկի այ-ժմ գտնվում է Պետերբուրգում: Լուր կայ, որ նա մտադիր է իր նոր պատկերների ցուցա-հանդէս կազմել:

Մեզ հաղորդում են, որ վերջին օրերի արտա-սովոր ցուրտը յուսահատութեան է հասցրել քա-ղաքի ջրաւոր աղբաքանկութեանը: Նա, որ մի-ջոց շուտի նոյն իսկ երկու ամիս ձմեռվայ սաս-տիկ ցրտերին տաքացնել իր խցովէն բնակարանը, ինչպէս կարող է աղտոտ մնալ սաստիկ ցրտերից, եթէ ձմեռը բացի խիստ լինելուց, երկարատե-կը լինի, և սկսելով հոկտեմբերից կը տանի մինչև ապրիլ... Ինչպէս և ի՞նչ պէտք է օգնութեան հաս-նի այդ դէպքում քաղաքի աղտոտ բնակչներին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱՅԱՆ ԱՋԱՍՄԻՏ ԵՒ ՊԱՇՏԱՆԻ ԱՊԱՆԻՍՏԱՆԻ ԿՈՒՍԱԳՈՐԹԻՒՆՆԵՐԸ

Ներկայումս Անգլիայում, ի հարկէ, գլխաւորա-պէս Լոնդոնում, մի բաւական արդէն խիստ և զգալի պաշար է սկսվում աղտոտման կուտակ-ցութեան, որի պարագլուխն է երեւել Գաղաթում, և պահպանողական կուտակցութեան մէջ, որի պարագլուխն է լուրջ Սոլսբորի և որի ձեռքումն է գտնվում անգլիական կառավարութեան այժ-ման զեկը:

Երկու կուտակցութիւնների մէջ եղած այդ պայքարը, այդ կռիւն է մրցումը նոր չէ. նա նոյն իսկ երկխոսութիւնն է սկսված. դա պատմական մի երևոյթ է, որ ունեցել է և ունի շատ նշանա-ւոր աղբեղութիւն Անգլիայի միջին քաղաքական և նոյն իսկ ներքին հասարակական կեանքի վրա:

Կիչներից մօտ 1.200 հոգի հիւանդացան: Բժշկա-կան գրականութիւնից յայտնի է, որ խօլերային համաճարակումները կարող են յայտնվել մինչև անգամ մեծ շինութիւններով առանձին՝ մասե-րում, կամ սենեակներում, այնպէս որ մի և նոյն տան, մի և նոյն դրծով պարագլուխ և ընդ-հանրապէս մի և նոյն պայմանները մէջ գտնվող ընտանիքները համաճարակումի ժամանակ տարբեր բաղդ ունեն հիւանդացան: Իբրև զարմանալի օրինակ, կարելի է այստեղ յիշել 1873 թ.ին խօ-լերային համաճարակման ժամանակ եղած երևոյ-թը Լաուֆելդի բանտում (Բալթիկայում), որ չը նայելով որ բոլոր բանտարկեալները մի և նոյն պայմանների մէջ էին, բանտի արեւելեան մա-սում երկու շաբաթվայ միջոցին խօլերային սաս-տիկ կատաղաբար էր ներգործում, իսկ բանտի միւս մասերը խօլերային աղտոտ մնացին: Այս տեսակ օտարոտի փաստը աչքի աւազ ունե-նալով, պիտի ընդունենք, որ վարակված շինու-թիւններում կան նշանաւոր տեղեր, որոնք հա-մաճարակումից աղատ են, ինչպէս նկատված է, որ վարակված փողոցներում գտնվում են չը վա-րակված տներ, կամ վարակված երկրներում չը վարակված տեղեր:

Պետենհոֆեր մեծ նշանակութիւն է տալիս զեանի ջրի մակերևոյթի ասոնիանին, նրա ասե-լով, զեանի ջրի մակերևոյթի բարձրանալը խօլե-րային համաճարակումների թուլանալուն է ուղեկ-ցում, իսկ ցածրանալը համաճարակումների սաստկանալուն հետ միաժամանակ է կատարվում: Պարզեւք մեր ասածը: Գետնի տակ, շատ թէ քիչ խորութեամբ, գործ-վում են թէ կաւային և թէ պինդ քարային չե-տեր, որոնք ջրի ծծման արգելք են լինում. զե-

իսկ այս անգամ այդ կռիւն հանդէս է գալիս աւելի հետաքրքրական հանգամանքնե-րում: Երկու կուտակցութեան մէջ լինելի այդ ընդհանրական սպասում է նոյն իսկ ամբողջ Անգ-լիան, իսկ ընդհանրական հետեւեւները, այսինքն թէ յաղթութիւնը որի կողմը կը մնայ, հենց այժմանից հետաքրքրում են և եւրոպական հա-տարակութիւններին:

Աղտոտման կուտակցութիւնը մեծ հաւատով պնդում է, որ իր կողմը կը մնայ յաղթութիւնը: Սոլսբորի բռնած քաղաքական ընթացքը, թէ ներքին և թէ՛ մանուշակա արտաքին քաղաքական հարցերում, երկու տարի կայ արդէն, որ զե-տեւութիւն է յարուցանում անգլիական հասարա-կական կարծիքի կողմից: Այժմ աղտոտմանների կարծիքով, այդ զեզոնութիւնը այնքան լաւ ձեւ-կերպով և արմատացել է, որ կարելի է բացար-ձակ կռիւ սկսել պահպանողական կուտակցու-թեան պրօպագանդէն ընդհանրապէս և Սոլսբ-որի միջնորդութեան դէմ մանաւորապէս: Նոյն իսկ այս օրերս Գաղաթում մօտ տեղի ունեցած մի ժողովում աղտոտմանները միաձայն այն հա-մոյման են հասել, որ ժողովրդի զեզոնութիւնը արդէն այնքան մեծացել է այժման միջնորդու-թեան դէմ, որ հարկաւոր է անմիջապէս պարա-մենտական շրջաններում դիմադրութիւն սկսել միջնորդութեան դէմ:

Եթէ աղտոտմանների այդ կռիւն հիմնաւոր է, ի հարկէ շատ շուտով Սոլսբորի միջնորդութի-ւնը կարող է ընկնել: Այդ բանը կարծէք պահա-նողականները նախատեսում են: Եւ այդ պատ-ճառով, նրանք վերին աստիճանի միամիտ ձեւ-նայով, այս օրերս մի քանի ամիս յոյսեր սկսեցին յայտնել: Օրինակ Լոնդոնի մի քանի լրագրողներ հաղորդում են, որ պահպանողական-ները յոյս ունեն իրանց միջնորդութեան երկա-րատնութեան վրա, և իրանց այդ յոյսը նրանք հիմնում են, — երկակայեցեք — այն բանի վրա, որ Գաղաթում արդէն 80 տարեկանից աւելի լինե-լով, կարող է մինչև 1891, երբ պէտք է լինեն նոր ընտրութիւններ, մեռնել, և այդպիսով մի-ջնորդութեան զեկը կրկին կը մնայ Սոլսբորի ձեռքում:

Եթէ այդպիսի ձեւապատգրական յայտերով է ապրում այդ կուտակցութիւնը, — ուրեմն նրա վախճանը մօտեցել է...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Բերլինից հեռագրում են, որ Վիլհելմ կայս-րը Աթէնքից վերադառնալով և Պոլիս գալով, այդտեղից կուղեորվի Բալթիկայում, ուր մինչև անգամ պատրաստութիւններ են տեսնվում աբ-դէն:

բանց վրա հաւաքվում է միջնորդութիւնը (անձերի, ձիւնի, ցողի) այն մասը, որ գետնի մակ-երևոյթից չէ զոլորչալացել կամ չէ հոսել: Եւ ի՞նչ տեղեր: Խոնարութիւնը այդ շերտերում հասնում է այն աստիճանին, որ նրանց մէջ եղած օդը դուրս է դալիս և նրա տեղը ընդունում է այն ջու-րը, որին անուանում ենք գետնի ջուր: Եւ, որեւ-մէր գետնի ջուր ասելով, մենք պիտի հասկանանք այն ջուրը, որ լցնում է վերին ծակտակին գետի-նը անթափանցիկ շերտից սկսած: Ուրեմն առան-ձին դէպքերում ջրօրի ջուրը համեմատն է գե-տնի ջրին: Մի և նոյն ժամանակ չը պէտք է հաս-կանալ, թէ գետնի ջուրը հորիզոնական ուղղու-թիւն ունի, այլ նրա դրութիւնը կախումն ունի իր վրա հաւաքված է ջուրը: Այդ շերտերի մէջ եղած փոսերում ջուրը ստորերկրայ լճեր է կազմում և ծորում է հանդարտ հեղեղով, վայրա-հակ ուղղութեամբ: Բացի գետնի յատկութիւնից, գետնի ջրի դրութիւնը կախումն ունի նմանա-պէս միջնորդութիւնից: Անձերային ժամանակ, գետնի մէջ ջուր շատ ծծվելուց, բացի գետնի մակերևոյ-թի խոնարանալը, գետնի ջրի դրութիւնը ևս բարձրանում է, եթէ նրա հոսանքը մի օր և է պատճառով արգելված է լինում, այդ հանգա-մանքներում հողի մինչև այդ ժամանակ օդով լցված ծակտակները ջրով են հեղեղվում: Երկար երաշխի միջոցին գետնի ջրի մակերևոյթի զե-րութիւնը ցածրանում է և կրկին հողի ծակտակ-ները լցվում են օդով: Այս կերպով գետնի ջե-րերը երբեմն ջրով, երբեմն օդով լցված լինելով, ազդում են գետնի մէջ կատարվող քիմիական երևոյթների և նմանապէս ստորին կազմաւոր-

— Լոնդոնից գրում են հետեւեւ. Գաղաթում կողմնակիցները սիրտ առնելով վերջնական ի-րանց տարած յաղթութիւնից, պատրաստվում են վճռական յարձակում գործելու: Սոլսբորի միջնոր-դութեան վրա: Այս օրերս այդ առիթով Գաղա-թում մօտ խորհուրդ կար, որին ներկայ էին, ի միջի այլոց՝ Մորէյ, Գրէյ, Լիլ և Լոնդոնից:

— Պարիզից գրում են, որ գետնալ բուլանմէի կողմնակիցները քիչ-քիչ թողնում են նրան, և ե-թէ այդպէս շարունակվի, հաւանականաբար գե-ներալը շուտով կը մնայ մենակ, առանց աջա-կիցների:

— Կ, Պոլսի թիւրք կիսապաշտօնական (Թա-րիք) լրագրող խօսելով Վիլհելմ կայսրի Կ, Պո-լիս գնալու առիթով, յայտնում է որ այդ գա-լուստը, ի հարկէ, առանց աղբեղութեան չի մնայ և կամրապնդի թիւրքային բարեկամութիւ-նը Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, նորե-րումս վախճանվեց Պարտուգալիայի թագաւոր Լուզովիկոս I. Թագաւորը վաղուց արդէն հիւանդ էր, բայց վերջին շաբաթներում նրա դրութիւնը այնպէս վատացաւ, որ բժիշկները յոյսերը կորեցին: Նրա առողջանալու վրա: Գեո. Լու. անցեալ շաբաթ-վայ սկզբում հաւաքվեցան թագաւորական պա-լատում թէ՛ հանդուցեալի բոլոր աղաքականները և թէ՛ միջնորդները: Հանդուցեալ թագաւորը, որը պատկած էր Ումբրեո թագաւորի ընթաց հետ, դեռ 52 տարեկան չը կար: Լուզովիկոս I դահը բարձրացաւ իր անդրանիկ եղբոր գոն-Պէդրոի վաղահաս մահուան պատճառով, որը միայն մի քանի տարի թագաւորեց: Լուզովիկոս I-ի թագա-ւորութեան ժամանակ, որը մի խաղաղասէր, խնդր և կրթված մարդ էր, Պարտուգալիայի վերջ-գրեց յեզափոխական շարունակներին և նորից սկսեց տնտեսապէս ծաղկել: Հանդուցեալ թագա-ւորը ջերմ կերպով սիրում էր արուեստը, գիտու-թիւնը և բանաստեղծութիւնը: Ինչն անձամբ թարգմանեց Շէքսպիրի գրուածները իր ժողովրդի համար: Նա թողեց երկու օրդի՝ կար և Լուզովի-կոս I-ը կարճ բարձրացաւ Պարտուգալիայի գահը գոն-Կարլոս I-ի անունով: Պարտուգալական նոր թագաւորը 24 տարեկան է:

Վախճանվեց 70 տարեկան հասակում դժուկ-բառիական կուտակցութեան ամենաժողովրդա-կան առաջնորդներից մէկը հարաւային Գերմա-նիայում, կար Մէյէր, որը հեռագրական և գրա-կանական տաղանդ ունէր: Մի ժամանակ, երբ նա քաղաքում էր իր քաղաքական գաղափարնե-րը վիրտէմբերցում, նրա ժողովրդականութիւնը այնքան մեծ էր, որ կար թագաւորը բացական-չեց՝ «Ես չը գիտեմ, ես եմ վիրտէմբերցի թա-գաւորը, թէ կար Մէյէր»: Նրա ժողովրդա-կանութիւնը աւելի ևս մեծացաւ, երբ նա բան-տարկութեան դատապարտվեց Բիսմարկին վրա-ւորելու համար:

ներս — միկրոնների կենսաբանութեան վրա: Ահա այս տեսակետից է բացատրում Պետենհոֆերը խօլերային համաճարակումների սաստկանալը և կամ թուլանալը, գետնի ջրի մակերևոյթի ցա-ծանալուն կամ բարձրանալուն համեմատ: Շատ բարեխիղճ դիտականներ հաստատում են, որ Պետենհոֆերի բացատրութիւնը խօլերային համա-ճարակումների սաստկանալու կամ նուաղելու վերաբերմամբ այնքան էլ ճիշդ չէ և իբրև կա-նոն ընդունել կարելի չէ: Մի քանի հանգամանք-ների վերաբերմամբ այդ կանոնը ի հարկէ չը-շանակութիւն ունի, — օրինակ, երբ գետնի ջրի մակերևոյթը ցածրանում է, գետնի վերի շերտե-րը, ջրից դատարկվելու յաջող հանգամանքներին նայելով, կարող են նպաստել խօլերային միկ-րոնների աճմանը, և շատ հեշտ կերպով միկրո-նները անցնելով գետնի ջրի մէջ և ծորալով դէպի հորերը, որտեղից ջուրը գործածութեան համար են վերցնում, պէտք է որ համաճարակումների զարգացմանը նպաստեն:

Մենք այժմ գիտենք, որ թէպէտև խօլերային միկրոնները կարող են խոնա. գետնի մէջ աճել և բազմանալ, բայց մի և նոյն ժամանակ նրանք այնքան կարիք չունեն բազմանալու համար գե-տնին ընտրել իրանց կիներում: Խօլերային միկ-րոնները շատ հեշտութեամբ բազմանում են խո-նա. ճերմակեղէնների վրա, բնաբանների կեղ-ծոտ յատակը, մինչև անգամ կեղտոտութիւն պարունակող ամեն մի ծակ ու պուճակ, սենեա-կի սովորական տաքութեան աստիճանին՝ փոքր ինչ էլ խոնարակեան ժամանակ կարող են բուռ-դանալ խօլերային միկրոնների համար:

(Կը շարունակվի)

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՕՖԻԱ, 16 հոկտեմբերի Կոնստանդնուպոլսի պրինցը հեռագրել է այստեղ, որ իրան արգելք են լինում ընտանեկան գործերը և յանձնարարել է Ստամբուլում ընդհանուր քաղաքական ազդեցություն ժողովը, բայց և այնպես, հաշտականաբար, ժողովի բացումը կը յետաձգվի:

ՎԻԵՆԱ, 16 հոկտեմբերի «Neue Freie Presse» լրագիրը մի առաջնորդող յոգուածով ապացուցանում է, որ Գերմանիայի համար Ռուսաստանի բարեկամական յարաբերությունը առերևույթ է, քան թէ Բալկանյան: Լրագիրը խոսքերով, իշխան Բիսմարկի անկասկած պատրաստ է զոհն Կոնստանդնուպոլսի պրինցին և Բալկանյան, մինչդեռ կոմս Կալենսկի այդ բանն անկէ կարող:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 հոկտեմբերի «Новое Время» լրագիրը տեղ է որ վճռում է երկամեծուդ գիծ անցկացնել Բեդրիկովից մինչև Ժիտոմիր:

ՍԹԵՐԵ, 16 հոկտեմբերի երկ ուղղափառ և կեղեցում տեղի ունեցաւ իշխան Կոստանտինի և պրուսական պրինցուհի Սաֆիայի հանդիսաւոր պատկազրութիւնը, Բարձրագոյն ազգականների թագաժառանգ Յեսարեվիչի, Գանիայի արքայական զոյգի, ցերմանական կայսրի, նրա ամուսնու և մօր, անդլական թագաժառանգի և ուրիշների ներկայութեամբ: Թագաժառանգ Յեսարեվիչը պրուսական պրինց Հենրիկուսի հետ բռնկէ ին թաղեր փնայի և հարսի զիններին Հանդիսականատարութեան վաճաճը յայտնից ազգաբնակիւթեանը թնդանթաձգութեամբ: Ապա պալատի մէջ օրհնեցին նորապսակներին՝ աւետարանական լուծերական կեղեցում ձէտով:

ՍԹԵՐԵ, 16 հոկտեմբերի երկվից Հանդիսաւոր ճաշի ժամանակ յունաց թագաւորը ֆրանսերէն լեզուով առաջարկեց նորապսակներին և իր օգնատափառ հիւրերին կենացը վիճակ կայսրը իբրև պատասխան այդ կենացին, ինքը առաջարկեց ցերմաներէն լեզուով նորապսակներին, յունաց թագաւորի և թագուհու, և յայն ազգի կենացը, որը նրան ջերմ ընդունելութիւն ցոյց տուցը: Այս բաղդաւորը եւ, աւելացրեց կայսրը, որ իմ քոյրը պէտք է ապրի Յունաստանում և յայն ունեւ, որ յայն ազգը կը օրդեգրի իմ քրոջը իր սիրով: Այդ կենացներին հետեցին ռուսայի զոչիւնները:

ԼՈՆԴՈՆ, 16 հոկտեմբերի «Times» լրագիրը հաղորդում է, որ Էդինբուրգի դուքսը, որը տեղաթափեան պատճառով անկարող եղաւ ներկայ գտնվել Պրիմուլաքայի թագաւորի թաղմանը, զարուս թաղաւորին այցելութիւն տուաւ պալատում: Բայց այցելութիւնից յետոյ նա ուշաթափվեց, և այդ ժամանակ դուքսը ծանր կերպով վիրաւորեց իր դէմքը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 հոկտեմբերի Այսօր երբ լըրանում է առաջին տարին այն օրից, երբ Նոյա կայսերական Մեծութիւնները Օգոստոսի առ ընտանիքով փրկվեցան Բօրի մօտ տեղի ունեցած երկամեծուդ խորտակումից, մայրաքաղաքի ըլլօր

կեղեցիներում կատարվեցան զոհացողական մաղթանքներ: Իսակովսկի տաճարում իշխանութեան բարձր ներկայացուցիչների, և պալատական բարձրագոյն պաշտօնականների, զիպլօմատիական մարմնի և գեներալների ներկայութեամբ տեղի ունեցաւ ժամերգութիւն: պատարագից յետոյ, ա. Սինօդի անդամները մաղթանք կատարեցին՝ ծնկապարտութեամբ, որի ժամանակ ամբողջ 101 անգամ թնդանթօթ արձակվեցաւ. ապա տաճարի առջև տեղի ունեցաւ կեղեցական հանդէս, որի վերջանալուց յետոյ դօրը անցաւ հանդիսաւոր մարշով: Գատիլնօյում, պալատական կեղեցում տեղի ունեցած մաղթանքին ներկայ էին այն ըւրր անձինք, որոնք Կոյսերական զնացքի մէջ էին գտնվում խորտակման ժամանակ: Լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգի և Մոսկվայի մէջ տեղեֆօնի հաղորդակցութեան հաստատելու հարցը մօտ է իր վճռին, և զրա համար հարկաւոր է 100 հազար ռուբլի:

ԲԵՂԳՐԱԿ, 17 հոկտեմբերի: Գահական ճառի պատասխանութեամբ շատ քիչ է տարբերութեամբ այդ ճառից: Վերջումը սրտազին հնարակաւթթիւն է յայտնիւթ թագաւոր Կայսրին: Բիտոյի յայտնեց, որ ինքը մեծ գօհութիւն է զգում, ի նկատի ունենալով այդ ուղերձում կառավարութեան յայտնած հաւատարմը: Սկուպլիայի ուղերձը ամեն տեղ լաւ ապաւորութիւն է թնդում և արտայայտում է Սերբիայի ձգտումը մօտենալու Ռուսաստանին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ Հոկտեմբերի 16-ին	
Լօնդօնի վրա 10 ֆունտ արծէ	95 ր. 65 >
Բերլինի վրա 100 մարկ	46 > 65 >
Փարիզի վրա 100 ֆրանկ	37 > 95 >
Ռուսի	7 > 67 >
Մաքսային կուպօններ	153 > 75 >
Արծաթ	1 > 11 >
Բօրսային դրոշմներ	6 և 70 >
Պետական 5% տոմս 1-ին շրջանի	99 > 37 >
— — — — — 2-րդ —	99 > 50 >
— — — — — 3-րդ —	99 > 37 >
— — — — — 4-րդ —	99 > 37 >
— — — — — 5-րդ —	99 > 37 >
— — — — — 6-րդ —	99 > 37 >
Նոր 4%	84 > 12 >
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	99 > 25 >
— — — — — 2-րդ —	99 > 25 >
— — — — — 3-րդ —	99 > 37 >
Նոր 5% առաջին փոխառութ.	258 > 50 >
— — — — — երկրորդ —	236 > — >
5 1/2% ընդամ.	101 > 75 >
Ոսկեայ ընդամ.	173 > — >
Եթերը կօնսօլիդ. փոխառ.	142 > 50 >
Նոր երկամեծուդային ընդամ.	99 > 25 >
5% գրաւակ. թղթեր կալուած.	— > — >
— — — — — փոխ. կրեդ. ընկ. մետ.	149 > 50 >
— — — — — թղթաւ.	92 > — >
Գրաւ. թղ. Ալլա. բանկի	97 > 75 >
Գիրդական բանկի	101 > 75 >
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43 տ.	— > — >
— — — — — Բուխարայի—18 և 43 տ.	— > — >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրիդգացիներ	94 > 87 >
Մօսկվայի քաղաք. օրիդգացիներ.	94 > — >
Օղէկայի	94 > — >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրլ.	— > — >
Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է:	

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԲՈՇԿԱՊԵՏ ԳՐԻԳՈՐ ՏԵՐ-ՄԿՐՏՁԵԱՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ (ԹԻՖԼԻՍԵՑԻ)
Տեղափոխվեց նոր բնակարան (Սապէրնայա փողոց, տուն Ալլադանօվի № 7):
9—10



Ա. Վ Օ Լ Յ Շ Մ Ի Տ,
ՐԻԳԱ, Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ և ՀԱՄԲՈՒՐԳ.
գոյութիւն ունի 1845 թից:
ԱՐԱՂ—ԲԱՇԵՆՈՒ և ՕՂԻԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Պատրաստում է մանաւորապէս. ԱՐԻԿՈՑԻՆ, ԲԵՆԵԿԻԿԻՆ, ՇԱՐՏԲԵՁ, ԿԻԻՐԱՍՈ՝ Տօլլանդտիան, կակաօի, կաֆէի, ՄԱՐԱՍԿԻՆ, մրգերի Լիպեռներ, ԿԻԵՎԻ Նալիկաներ, մրգերի Նաստօյկաներ, ՏՄԻՆԻ տալած արաղ, Նմանապէս ՕՂԻ, ՐՕՄ, ԿՕՆԻԱԿ, ԱՐԱԿ, միակ իսկական ՐԻԳԱՅԻ ԿՈՒՆՑԵՆԵԱՆ խոտի ԲԱԼՁԱՄ, ՍՊԻՐՏ, ՄԱԲԻՎԱՅ ՕՂԻ, ԹԹՄՈՐ և այլն:

Իմ պատրաստած արտասահմանեան լիկերներ իրանց յատկութեամբ պակաս չեն ներմուծվածներից, բայց անհամեմատ էման են: Նրանք արժանացան թէ համախաբային և թէ այլ ցուցահանդէսներում ամենաբարձր պարգևներ:

Օղիի զօրծարանի արդիւնաբերութիւնները ծախվում են ըլլօր գինեւաճառանոցներում: Պրէյսկօրանտները ուղարկվում են անվարձ:

2—10 (1 հ.)

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԿԱՆՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՅՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Ուրբաթ, 27 Հոկտեմբերի 8 Նոյեմբերի ԲԱՅՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգհաւ EBBE (ԷԲԲ) Նաւապետ RANGONE (ԲԱՆԳՕՆ), մանկով Կ. Պօլիս, Պօրտ-Նաֆօս և Լակադար Ազենտները՝ ԲԱՅՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԵՆԺԵՐ, ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՐԳ. ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆ, իսկ ԲԱՅՈՒՄԻ մէջ ԳՕԼԻՂՈՒՍԻ:
1—2

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԻՒԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՍԱՄՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԵՄ

ՊՕԴՈԼԵԱՆ ԱՍԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻՆԵՐ 50 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՍԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿԻՄԻ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍ.
ԹԻՖԼԻՍԻՄ, Կոլլապսան զեղաւաճաւատան, և պ. պ. Շահ-պարոնանցի, Մակկէրի, Սէնչի-կօվսկու և Ազմուրովի զեղատներում. ԲԱՅՈՒՄԻ մէջ, Բէկկէրի մօտ, ԳՈՒԹԱՑԻՍԻՄ Կօկօշեվի մօտ, ԱՍԱՎՐՕՊՈԼԻՄ, Բրօխնօցիու մօտ և ԵԿԱՆԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ:
35—52 (Հ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԱՐԱՂԱ ԳԱՂԱՔԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՈՒՄ
ԲԱՅՎԱՅ Ե ԳՐԱԴԱՐԱՆ.

Գրադարանը չունենալով սեփական միջոցներ, դիմում է յարգելի հեղինակներին, թարգմանիչներին և ուրիշ անձանց, խնդրելով օգնել գրադարանին՝ թէ զրբեր նուիրելով, և թէ գրամական նուէրներ անկելով: Ցանկացողները թէ զրբերը և թէ գրամական նուէրները կարող են յանձնել Թիֆլիսում Կենտրոնական գրալաճառանոցին, ուր և այդ ըլլօրը կը մօցնվին Թաւրիզի հայոց առաջնորդից տուած ժապաւինեալ մատենանի մէջ:
9—10

UN ANGLAIS donne des leçons de langue anglaise. S'adresser au bureau de la Rédaction du journal arménien le «Mschak».

АНГЛИЧАНИНЪ даетъ уроки англійскаго языка. Обратитесь за адресомъ въ редакцію газетъ «Мшакъ».


ՄԻ ԱՆԳԼԻԱՑԻ տալիս է անգլիական լեզուի դասեր: Գիմել «Մշակի» խմբագրութեան
3—10 (Հ.)

ՎՐԱՍԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԵՃԱԿԱՅԻՆ ԿՕՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ առեանի մէջ նշանակված է աճուրդ, 27-ին տոյն հոկտեմբերի, առանց կրկնաճուրդի, կապալով տալաւ համար էջմիաճնապատկան այգին Օրթաճալայի:
Անդամ կօնսիստօրիայի ՂԵՆԻԳ աւագ քահանայ Խարաղեանց
2—3

ԿՕՇԿԱԿԱՐԻ
ԱՐ Հ Ե Ս Տ Ա Ն Ո Ց
ԱՂԱՍԻ ՏԵՐ-ՋԱՔԱՐԵԱՆՑԻ

Գօլօվնսկի, տուն Բէյտերի, № 11

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ
չափաւոր գներով: Արհեստանոցում ծախվում են
նոյնպէս տղամարդկանց և ՁԻՆՈՐԱԿԱՆ ամեն
տեսակ պատրաստի կօշիկներ:
10—10 (Հ.)



ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԵԱՆԻ
(Կուկիս, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱԻՕՏԵՐԸ
ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՐԵՎՈՒՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի (փրարում և ստամաքաւի)
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքարթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵԿՈՆԵՐԸ
ԳԱԴՕՄՍԿԻ—5 1/2—7 ժ. կանուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էկիպրօտերապիա):
ԲԵՆԿԵՎՍԿԻ—7—8 ժամ.
Հիւանդանոցում են մանկաւարաճաւհիք՝ Երկանցեան և Արտաղեան
վճար—50 Կ. Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաճանութեամբ:
Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԴԿՈՎՍԿԻ